ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 սեպտեմբերի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

111
(3320)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ Է ՄԱՄՈՒԼԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումից հետո ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը հայտարարել է, թե մեր նյութի վերնագիրը «պարզապես կեղծ է», եւ փորձել է հերքել անհերքելին:

Սակայն նախարարի հակադարձումը չի պատասխանում մեր հրապարակման հիմնական հարցին: Ավելին՝ նրա բերած փաստարկները հիմնված են հենց այն պաշտոնական պատասխանի վրա, որը «Ժողովուրդ» օրաթերթը ստացել է նախարարությունից:

Նախարարն իր գրառման մեջ նշում է. «Իրականության մեջ, սակայն, որեւէ նման խնդիր չկա, եւ մայրության նպաստների վճարումը տեղի է ունենում բնականոն եւ սահմանված ընթացակարգով»:

Սակայն նախարարության՝ մեր հարցմանը տված պաշտոնական պատասխանում նման պնդում չկա: Ընդհակառակը՝ նախարարությունը մանրամասն նկարագրում է, թե ինչ ժամկետներում պետք է իրականացվի նպաստների հաշվարկն ու վճարումը, եւ նշում է, որ նպաստները վճարվում են յուրաքանչյուր ամիս երկու փուլով՝ ամսվա 5-10-ը եւ 25-30-ը:

Նույն պատասխանում նախարարությունը հստակ գրում է. «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստները վճարվում են հաշվարկման եւ նշանակման ամսվա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում (մինչեւ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը)»:

Այսինքն՝ պետությունն ինքն է սահմանել վճարման կոնկրետ ժամկետ: Հետեւաբար, քաղաքացիների կողմից բարձրաձայնվող հարցը՝ այդ ժամկետից ուշացած վճարումներ եղե՞լ են, թե՞ ոչ, լիովին օրինաչափ հարց է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում քննարկվում է Երեւան քաղաքի վարչության պետ Ռաֆայել Վարդանյանի ազատման հարցը: Բանն այն է, որ երկու ուժային կառույցները՝ ՆԳՆ ոստիկանությունն ու Քննչական կոմիտեն, բախվել են իրար եւ առայժմ հաղթում է քննչականը: ArmLur.am-ը հայտնել էր, որ հակակոռուպցիոն կոմիտեում ակտիվ քննություն է ընթանում Քննչական կոմիտեում ոստիկանին խոշտանգելու դեպքով: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել եւ հարցաքննվել ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը: Հիշեցնենք՝ օգոստոսի 22-ին հայտնել էինք, որ ՆԳՆ ոստիկանության Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Աղասի Բագրատունյանը ծեծի էր ենթարկվել, ու տեւական ժամանակ շտապօգնության աշխատակիցներին թույլ չէին տվել մտնել քննչական վարչություն, դեպքի վերաբերյալ ահազանգ էր ստացել նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Ըստ ոստիկանի հարազատների՝ ծեծի անմիջական մասնակից է եղել Ռաֆայել Վարդանյանը, եւ հենց նրա մասնակցությամբ են քննիչները ծեծի ենթարկել ոստիկանության աշխատակցին: Ոստիկանության աշխատակից օպերլիազոր Սարգիս Աղասի Բագրատունյանը այս պահին կալանավորված է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել Սահմանադրական դատարանի դատավորների ունեցվածքն ու դրա փոփոխությունները տարիների ընթացքում: Այս անգամ ուսումնասիրել ենք ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանի մասնագիտական ուղին, ինչպես նաեւ նրա ունեցվածքը: 2021 թվականի հայտարարագիրը ցույց է տալիս, որ Արթուր Վաղարշյանի անունով այդ ժամանակ առկա է եղել 8 միավոր անշարժ գույք: Դրանց թվում են Երեւանի Արաբկիր վարչական շրջանում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի գույքը, ինչպես նաեւ Գեղարքունիքի մարզի Լճաշենում գտնվող մի քանի հողամաս եւ անհատական բնակելի տուն՝ տնտեսական շինություններով: Գույքի մի մասը համատեղ սեփականություն է, իսկ Լճաշենի հողամասերից մեկը՝ միանձնյա սեփականություն: Բնակելի տունը ձեռք է բերվել ժառանգությամբ՝ 1993 թվականին, իսկ Երեւանի անշարժ գույքը՝ գնմամբ, 2001 թվականին: 2021 թվականին նոր անշարժ գույք չի ձեռք բերվել, ինչպես նաեւ որեւէ գույք չի օտարվել: Տարվա վերջում հայտարարագրված է եղել նույն 8 անշարժ գույքը: Վաղարշյանը հայտարարագրել է նաեւ երկու ավտոմեքենա՝ 2007 թվականի LEXUS եւ 1993 թվականի OPEL: Երկուսն էլ ձեռք են բերվել ավելի վաղ՝ համապատասխանաբար 2013 եւ 2002 թվականներին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Եվրամիության արտաքին գործողությունների ծառայությունը հրապարակել է «2025 Human Rights and Democracy in the World» տարեկան զեկույցը, որի առանձին բաժինը վերաբերում է Հայաստանին: «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԵՄ գնահատականը երկակի է. մի կողմից՝ արձանագրվում են դատական, ոստիկանական եւ սահմանադրական բարեփոխումներ, մյուս կողմից՝ նշվում են մի շարք խնդիրներ՝ ոստիկանության կողմից ուժի հնարավոր չարաշահումներից մինչեւ դատական անկախության պակաս, նախնական կալանքի լայն կիրառում եւ քրեական արդարադատության հնարավոր օգտագործում այլակարծությունը ճնշելու համար: ԵՄ-ն նշում է, որ 2025-ին Հայաստանը շարունակել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի բարեփոխումները, սակայն քաղաքացիական հասարակությունը քննադատել է դրանց հետեւողականությունն ու առաջընթացը: Զեկույցի համաձայն՝ Հայաստանում շարունակվել են դատական համակարգի բարեփոխումները՝ դատավորների բարեվարքությունը, հաշվետվողականությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԹՇՆԱՄԻՆ ՉԻ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՐ ԾՐԱԳՐԵՐԻՑ»

ArmLur.am-ը զրուցել է «Վերածնվող Արցախ» հ/կ նախագահ Անաստաս Իսրայելյանի հետ: Զրույցի ընթացքում քննարկվել են Արցախի, Հայաստանի ներքաղաքական իրավիճակի, իշխանությունների վարած քաղաքականության եւ այլ կարեւոր հարցեր:

- Պարոն Իսրայելյան, այսօր այցելել եք Եռաբլուր՝ նշելու Արցախի անկախության օրը: Ի՞նչ կարեւորություն ունի այս օրը հատկապես այսօր, եւ ո՞րն է օրվա հրամայականը:

- Այո՛, այսօր մենք գտնվում ենք Եռաբլուրում՝ Արցախի անկախության օրը նշելու եւ մեր հարգանքի տուրքը մատուցելու մեր զոհված տղաներին: Եռաբլուրը հենց այն վայրն է, որտեղ ամփոփված են այն տղաների մարմինները, որոնց շնորհիվ Արցախը կարողացավ ձեռք բերել եւ պաշտպանել իր անկախությունը: Այսօրվա պայմաններում մենք պետք է շարունակենք կիսատ թողած գործը: Անկախությունը միշտ պայքար է պահանջում՝ թե՛ այն ձեռք բերելու, թե՛ պաշտպանելու եւ պահպանելու համար: Անկախության գաղափարը ենթադրում է պայքարի ճանապարհով առաջ գնալու պատրաստակամություն: Այսօր մենք ականատես ենք լինում նրան, որ թե՛ ներկա իշխանության, թե՛ քաղաքական դաշտի որոշ ներկայացուցիչների կողմից փորձում են մոռացության մատնել Արցախի հարցը: Ես ամբողջովին հակասում եմ նման մոտեցումներին, որովհետեւ Արցախի անկախությունը Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի անվտանգության կարեւորագույն աղբյուրներից մեկն է եղել: Եթե պատմական նշանակություն ունեցող այսպիսի հանգամանքները չամրապնդենք եւ շարունակենք մոռացության մատնել, ապա հետագայում մեր ժողովուրդը տարածաշրջանում ունենալու է ավելի մեծ եւ ավելի լուրջ խնդիրներ:

Մեր խնդիրը պատմական թշնամու հետ պայքարն է: Պատմությունից քաղած դասերը ցույց են տալիս, որ այդ թշնամու ծրագրերը չեն փոխվել, եւ մենք պետք է կարողանանք դրանց հակադրել մեր կամքը, ուժն ու դիմադրությունը:

Այսօր, երբ Մայր Հայաստանը գտնվում է ծանր իրավիճակում, մենք համոզվեցինք, որ Արցախի կործանումից հետո սկսվեցին շատ ավելի լուրջ խնդիրներ: Արցախի կորուստը բոլորիս համար պետք է դառնա ազդակ՝ վերականգնելու մեր պայքարի ուժն ու կամքը:

Թշնամին չի հրաժարվելու իր ծրագրերից եւ պահանջներից: Իսկ մենք, որպես հազարամյակների պատմություն ունեցող ժողովուրդ, պետք է կարողանանք հակադրել դրան մեր քայլերը՝ ոչ միայն խոսքով, այլեւ կոնկրետ գործողություններով:

Ամփոփելով՝ կարող եմ ասել, որ Արցախի հայկական վերականգնման եւ մեր ժողովրդի լավ ապագայի հնարավորությունը կլինի այն ժամանակ, երբ մեր պատմական նշանակություն ունեցող հարցերը մշտապես առաջնային լինեն եւ մնան մեր օրակարգում:

- Պարոն Իսրայելյան, այսօր որքանո՞վ եք վճռական տրամադրված պահպանելու Արցախի պետական ինստիտուտները: Տարբեր խոսակցություններ կան նաեւ դրանց գործունեության վերաբերյալ, քննարկում պետք է լիներ, որը հետագայում չեղարկվեց: Ձեզ հայտնի՞ է՝ որն էր պատճառը: Եւ մենք տեղեկություն ունենք, որ Դուք նոր նախաձեռնություն եք սկսել՝ «Արցախի ձայնը»: Ինչո՞ւ որոշեցիք կրկին հանդես գալ առանձին նախաձեռնությամբ:

- Վերջին ժամանակներում Ձեր նշած հարցի հետ կապված տեղի ունեցող զարգացումներն ինձ ստիպեցին «Արցախի ձայն» նախաձեռնության ներքո սկսել այս աշխատանքը: Նպատակն է մշտապես բարձրաձայնել Արցախի անունը, Արցախի հարցի կարեւորությունը եւ Արցախի ժողովրդի՝ իր հայրենիք վերադարձի իրավունքի մասին:

Այս իրավիճակն է ստիպում ինձ եւ ինձ նման մարդկանց գնալ նման քայլերի:

Մենք ունենք Արցախի պետական կառույցներ, որոնք Արցախի ժողովրդի տեղահանումից հետո շարունակում են իրենց գործունեությունը: Սակայն անցած երեք տարիների ընթացքում, իմ գնահատմամբ, իրենց դրսեւորումներով կամ իրենց պատասխանատվության շրջանակում նրանք չեն իրականացրել այն ծրագրերը եւ չեն ընտրել այն ճանապարհը, որի միջոցով հնարավոր կլիներ ապահովել Արցախի ժողովրդի համախմբումը Մայր Հայաստանում:

Չի իրականացվել նաեւ այնպիսի գործունեություն, որը կկարողանար ամրապնդել Արցախի ժողովրդի հույսն ու հավատը վերադարձի նկատմամբ, որպեսզի մարդիկ չարտագաղթեին եւ կարողանային մնալ Մայր Հայաստանում:

Ես դա կապում եմ նաեւ անձնական պատկերացումների եւ որոշումների հետ: Ես, լինելով մի շարք հանդիպումների եւ քննարկումների մասնակից, եկել եմ որոշակի եզրակացության:

Մի մասը, ունենալով սեփական ունեցվածքը կորցնելու կամ դրա հետ կապված խնդիրներ ունենալու մտավախություն, չի գնում վճռական եւ հստակ քայլերի: Մյուս մասն էլ, ներկա իշխանության կողմից հնարավոր ճնշումների վերաբերյալ մտավախություն ունենալով, նույնպես չի գնում անհրաժեշտ քայլերի:

Բայց ես նորից եմ շեշտում՝ այսօր մենք գտնվում ենք Եռաբլուրում՝ Արցախի անկախության օրը: Այստեղ մենք խոնարհվում ենք այն մարդկանց գերեզմանների առաջ, ծաղիկներ ենք դնում եւ մեր հարգանքի տուրքն ենք մատուցում նրանց:

Յուրաքանչյուր մարդ, այդ տուրքը մատուցելիս, իր գիտակցության մեջ պետք է հասկանա, որ այս տղաները զոհաբերել են իրենց կյանքը հենց այն ժամանակներում, երբ անհրաժեշտ էր կայացնել վճռական որոշումներ, որպեսզի հաղթանակ արձանագրվի:

Ներկա պայմաններում նույնպես անհրաժեշտ է, որ պատասխանատու մարդիկ իրենց գիտակցության մեջ հասկանան՝ պետք է կայացնել վճռական որոշումներ:

Ես վստահ եմ, որ ապագայում կրկին բարենպաստ ժամանակներ են գալու, եւ Արցախի հարցը նորից բարձրաձայնվելու է: Ես հավատում եմ, որ Արցախի ժողովրդի վերադարձի հարցը կարող է իրականություն դառնալ:

Այդ դեպքում պատասխանատու ղեկավարների պատասխանատվությունը շատ մեծ է: Նրանք, ովքեր մինչ օրս քայլեր չեն ձեռնարկում եւ չեն ծառայում ժողովրդին ու Արցախի Հանրապետությանը, այսօրվա իրավիճակում կրկնում են այն սխալները, որոնք նախկինում թույլ են տրվել Արցախում:

Մենք տեսնում ենք ոչ բավարար աշխատանք, ոչ բավարար պայքար եւ ոչ բավարար ներգրավվածություն՝ Արցախի հարցը բարձրացնելու, պահպանելու եւ կարեւորելու ուղղությամբ:

Հենց դրա համար էլ «Արցախի ձայնե նախաձեռնության նպատակն է թույլ չտալ, որ Արցախի հարցը լռեցվի կամ մոռացության մատնվի:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՎԻԶԱՅԻՆ ՌԵԺԻՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑ ՉԿԱ

Հայաստանի կառավարության օրակարգում Ռուսաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմ սահմանելու հարց չկա: Այս մասին լրագրողների հետ ճեպազրույցում հայտնել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Ավելի վաղ թեմային անդրադարձել էր ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան: Փաշինյանն, ի պատասխան լրագրողի դիտարկմանը, արձագանքել է. «Իսկ ո՞վ է նման բան քննարկել: Մենք բացարձակապես նման բան անելու մտադրություն ո՛չ ունենք, ո՛չ էլ երբեւէ ունեցել ենք, ո՛չ էլ նման բան մեր մտքով անցել է: Ընդհակառակը, մենք մեծ հաճույքով ենք ընդունում Ռուսաստանից եկող զբոսաշրջիկներին, եւ տեսնում ենք, որ հիմա նրանք Հայաստանի զբոսաշրջային առավելությունները առաջ մղող շատ ակտիվ դերակատար են դարձել: Հայաստանի հանրությունն էլ մեծ հաճույքով եւ սիրով է ընդունում այդ մարդկանց, եւ նրանք էլ, կարծես, Հայաստանում իրենց վատ չեն զգում, մենք էլ ուրախ ենք, ինչպես, իհարկե, նաեւ մյուս երկրներից եկող զբոսաշրջիկների պարագայում: Նման բան մեր մտքով երբեք չի էլ անցել, մենք նման պատճառ չունենք»:

ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյիին, ով ավարտում է դիվանագիտական առաքելությունը մեր երկրում: Վարչապետը շնորհակալություն է հայտնել դեսպանին սերտ համագործակցության եւ Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունների հետեւողական զարգացմանը նպաստելու համար: Նիկոլ Փաշինյանը, մասնավորապես, ընդգծել է երկու երկրների միջեւ ռազմավարական գործընկերության հաստատման, ինչպես նաեւ տնտեսության, ենթակառուցվածքների, մշակույթի եւ այլ ուղղություններով կապերի խորացման ու ընդլայնման փաստը:

Օլիվիե Դըկոտինյին իր հերթին եւս շնորհակալություն է հայտնել վարչապետին եւ ՀՀ Կառավարությանը՝ աջակցության, համատեղ աշխատանքի եւ արդյունավետ փոխգործակցության համար: Դեսպանը համոզմունք է հայտնել, որ երկու երկրների միջեւ փոխգործակցությունը կշարունակի ընդլայնվել, այդ թվում՝ համատեղ նոր ծրագրերի իրականացման արդյունքում: Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել Հայաստան-Ֆրանսիա համագործակցության օրակարգային հարցերի շուրջ:

Վարչապետ Փաշինյանը դեսպանին մաղթել է հաջողություններ հետագա գործունեության ընթացքում:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԽՈՄՆԱԿ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

ՔՊ-ական նախկին պատգամավոր Զուլիետա Ազարյանը հայտնում է.

«Սիրելի՛ ընկերներ, գործընկերներ, ԶԼՄ-ների հարգելի ներկայացուցիչներ.

այսօրվանից ստանձնում եմ Երեւանի քաղաքապետի մամուլի խոսնակի պաշտոնը:

Ինձ համար սա առաջին հերթին մեծ պատասխանատվություն է՝ ներկայացնելու Երեւանի քաղաքապետարանի աշխատանքը, քաղաքապետի եւ քաղաքապետարանի թիմի գործունեությունը, ինչպես նաեւ ապահովելու հանրության եւ ԶԼՄ-ների հետ բաց, օպերատիվ եւ արդյունավետ հաղորդակցություն:

Գիտակցում եմ, որ մամուլի խոսնակի աշխատանքը միայն տեղեկատվություն փոխանցելը չէ: Այն նաեւ պատասխանատվություն է՝ լինել հասանելի, ճշգրիտ եւ հետեւողական, լսել հարցերը, ապահովել պատշաճ հաղորդակցություն եւ հանրությանը ներկայացնել Երեւանի կյանքին ու քաղաքային կառավարմանը վերաբերող կարեւոր գործընթացները:

Հատկապես ուզում եմ ընդգծել իմ պատրաստակամությունը՝ սերտ եւ գործընկերային աշխատանք կառուցելու բոլոր լրատվամիջոցների եւ լրագրողների հետ:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին՝ ցուցաբերած բարձր վստահության եւ այս պատասխանատու պաշտոնն ինձ վստահելու համար»:

ԶԱՐԳԱՆՈՒՄ ԵՆ

Վաշինգտոնի գագաթնաժողովից ի վեր մենք ապրում ենք խաղաղության պայմաններում: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ռազմական լարվածություն չի եղել: Ըստ ԱՊԱ-ի՝ այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահի հատուկ ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկովը՝ ելույթ ունենալով Բաքվում կայացած «-Քաղաքային վերակառուցման համար մարդասիրական ականազերծում. անվտանգ համայնքների համար գերազանցության չափանիշների սահմանում» թեմայով 4-րդ միջազգային համաժողովում: Նրա խոսքով, կառավարությունների եւ հասարակությունների միջեւ երկխոսությունը շարունակվել է, առեւտրային եւ տնտեսական կապերը սկսվել են, եւ զարգանում են կապի եւ հաղորդակցության ոլորտներում նախագծերը:

«Միեւնույն ժամանակ, մեր հասարակություններից ակնկալվում է, որպեսզի նրանք ապագային նայեն այլ աչքերով: Սա իսկապես պատմական հնարավորություն է: Այնուամենայնիվ, խաղաղությունը չի ստեղծվում միայն քաղաքական համաձայնագրերով: Խաղաղությունը պետք է տեսանելի եւ շոշափելի լինի տեղում, մարդկանց առօրյա կյանքում: Յուրաքանչյուր նոր զոհ ոչ միայն մարդասիրական ողբերգություն է, այլ նաեւ հոգեբանական հարված է ընտանիքներին: Այն նաեւ հիշեցնում է հասարակությանը, որ պատերազմը դեռեւս ամբողջությամբ անցյալի մաս չէ, եւ սա անխուսափելիորեն բացասաբար է անդրադառնում կարգավորման գործընթացի նկատմամբ հանրային վստահության վրա», - նշել է Ամիրբեկովը:

ՔԱՅԼ ՀԵՆՑ ԵՐԵՎԱՆԻ ԴԵՄ

Հնարավոր է, որ Հայաստանի կողմից Ռուսաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմի սահմանումը քայլ լինի, որն ուղղված է ոչ թե Մոսկվայի, այլ հենց Երեւանի դեմ, Արեւելյան տնտեսական համաժողովում հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան, հաղորդում է ՌԻԱ Նովոստի-ն: «Եթե Հայաստանը հանկարծ նաեւ վիզաներ մտցնի, ապա դրանք կմտցնի ոչ թե մեր դեմ, այլ իր սեփական քաղաքացիների դեմ», - լրագրողներին ասել է Զախարովան: Նա ընդգծել է, որ այդ որոշումը կանդրադառնա նաեւ Ռուսաստանի այն քաղաքացիների վրա, ովքեր Հայաստանում բազմաթիվ ազգականներ ունեն:

ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՏՈՎ ԿԿՈՐԻ

Հայաստանի մոտ շուտով կկորի Եվրոպական միությանն անդամակցելու ցանկությունը, հայտարարել է ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, հաղորդում է ՌԻԱ Նովոստին. «Տնտեսապես Եվրոպական միությունը, բազմաթիվ գործոնների բերումով, ներառյալ իր կարճատեսությունը, չասելու համար՝ հիմարությունը, կորցնում է իր առավելությունները: Ներցիայով երկրները՝ մեր սերբ բարեկամները, հիմա էլ մեր հայ գործընկերները, ձգտում են անդամակցել ԵՄ-ին: Վստահ եմ, որ նրանց մոտ այդ ցանկությունը շատ շուտով կկորի», - ասել է Լավրովը Արեւելյան տնտեսական համաժողովի շրջանակներում: Նա նշել է, որ Եվրոպական միությունը այսօր իր բոլոր տնտեսական առավելությունները մսխում է:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ո՞Վ Է ԿՈՄԻՏԵԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆԱԽԱԳԱՀԸ

Կառավարության որոշմամբ Խաչատուր Խաչիկյանը նշանակվել է Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահ: Խաչիկյանը մինչ այս զբաղեցնում էր նույն կոմիտեի նախագահի առաջին տեղակալի պաշտոնը՝ այդ պաշտոնին նշանակվելով 2018 թվականի օգոստոսի 2-ին:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Խաչատուր Խաչիկյանի ունեցվածքը, հասկանալու համար, թե ինչ ունեցվածք ունի նա: 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Խաչիկյանը ունի երեք անշարժ գույք՝ բոլորը Երեւանում: Դրանցից մեկը բնակարան է, որի նկատմամբ նա ունի 19/80 բաժնեմաս: Այն ձեռք է բերել 2015 թվականին՝ ժառանգությամբ: Մյուս երկու գույքերը համատեղ սեփականությամբ բնակելի տուն եւ բնակարան են: Բնակելի տունը ձեռք է բերվել 2024 թվականին, իսկ բնակարանը՝ 2003 թվականին: 2025 թվականին նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ որեւէ գույք չի օտարել:

Խաչիկյանը հայտարարագրել է նաեւ 2023թ. արտադրության Honda մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2024 թվականի հունվարին:

Նրա բանկային հաշիվներում տարվա սկզբում առկա է եղել 89 հազար 865 դրամ, 113 եվրո եւ 69.7 ԱՄՆ դոլար: Տարվա վերջում դրամային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 919 հազար 831 դրամ, իսկ եվրոյի եւ դոլարի մնացորդները՝ համապատասխանաբար 4.53 եվրո եւ 7.44 դոլար: Բացի այդ, տարեվերջին նա հայտարարագրել է 1 մլն դրամ կանխիկ գումար: Էլեկտրոնային հաշիվներում առկա է եղել 16 հազար 65 դրամ:

2025 թվականի ընթացքում Խաչիկյանի ընդհանուր հայտարարագրված եկամուտը կազմել է 23 մլն 39 հազար 141 դրամ: Դրանից 19 մլն 91 հազար 191 դրամը աշխատանքի վարձատրությունն է, 2 մլն 327 հազար 950 դրամը՝ եկամտային հարկի վերադարձը, իսկ 1 մլն 620 հազար դրամը ստացել է վարձակալությունից: Նորանշանակ նախագահը հայտարարագրել է նաեւ երկու վարկային պարտավորություն: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դրանց մայր գումարի մնացորդը ընդհանուր կազմել է 9 մլն 975 հազար 388 դրամ: 2025 թվականին Խաչիկյանը հանգստի նպատակով կատարել է 2 մլն դրամի ճանապարհածախս եւ կեցության ծախս:

Այսպիսով, նորանշանակ պաշտոնյան կոմիտեի նախագահի պաշտոնին է անցնում՝ ունենալով երեք անշարժ գույք, 2023 թվականի արտադրության Honda ավտոմեքենա, շուրջ 2 մլն դրամ բանկային հաշիվների մնացորդներ, 1 մլն դրամ կանխիկ գումար եւ շուրջ 10 մլն դրամ վարկային պարտավորություններ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊՈՒՏԻՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Վլադիմիր Պուտինը Արեւելյան տնտեսական համաժողովի ժամանակ հայտարարել է, որ Ռուսաստանը «հայելային պատասխան» է տվել Ուկրաինայի կողմից քաղաքացիական օբյեկտներին ուղղված հարվածների համար: Նա նշել է, որ սեպտեմբերի 2-ին ուկրաինական զինված ուժերը փորձել են հարձակվել ռուսական երեք նավթավերամշակման գործարանների վրա, գրում է Լուրեր.com-ը:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ ուկրաինական զինված ուժերը հարվածներ են հասցնում Ռուսաստանի քաղաքացիական օբյեկտներին, ինչի պատճառով Մոսկվան, նրա խոսքով, ստիպված է եղել «հայելային պատասխան» տալ: Այս մասին նա ասել է Արեւելյան տնտեսական համաժողովի լիագումար նիստում:

«Մենք ելնում էինք այն համոզմունքից, որ նույնիսկ զինված հակամարտության պայմաններում քաղաքացիական օբյեկտները չպետք է հարձակման թիրախ դառնան: Բայց այս հարցում մենք սխալվեցինք: Մեր հակառակորդը, ցավոք, այլ կերպ է մտածում եւ սկսել է հարվածներ հասցնել քաղաքացիական, բացառապես քաղաքացիական օբյեկտներին: Ինչպես տեսնում եք, մենք ստիպված եղանք հայելային պատասխան տալ»,- ասել է Պուտինը:

ՌԴ նախագահը նաեւ հայտնել է, որ սեպտեմբերի 2-ին Ուկրաինայի զինված ուժերը փորձել են հարվածել ռուսական երեք նավթավերամշակման գործարանների:

Ավելի վաղ Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը հայտարարել էր, որ ռուսական ուժերը շարունակում են հարվածներ հասցնել Ուկրաինայի ռազմական եւ, իր ձեւակերպմամբ, «ռազմականին հարակից» ենթակառուցվածքներին:

ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկություններով՝ քիչ առաջ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կարեն Անդրեասյանին վերանշանակել է Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի պաշտոնում:

Կարեն Անդրեասյանն այս պաշտոնում նշանակվել էր 2025 թվականի օգոստոսին՝ վարչապետի որոշմամբ: Մինչ այդ նա զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարի, ապա՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնները:

Նշենք, որ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի պաշտոնը առանցքային նշանակություն ունի Հայաստանի դեմ եւ Հայաստանի կողմից ներկայացվող միջազգային դատական ու արբիտրաժային գործընթացների համատեքստում:

Հիշեցնենք, որ Անդրեասյանը ԲԴԽ նախագահի պաշտոնից հրաժարական էր ներկայացրել 2024 թվականի նոյեմբերին, իսկ 2025 թվականի օգոստոսին նշանակվել էր միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ:

Ս. Գ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ TRIPP–Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ՀՀ եւ ԱՄՆ համատեղ պատվիրակությունը այցելել է Սյունիք՝ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարեկեցության» (TRIPP) ծրագրի իրականացման հարցերը քննարկելու նպատակով, գրում է Լուրեր.com-ը:

Գորիսում, Կապանում եւ Մեղրիում հանդիպումներ են անցկացվել համայնքների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են տարածաշրջանային կապերի ընդլայնման եւ հատկապես Սյունիքի համար նոր տնտեսական հնարավորությունների ստեղծման հեռանկարները:

Հանդիպումներին մասնակցել են ՀՀ ԱԳՆ եւ միջազգային առեւտրի ոլորտի ներկայացուցիչներ, ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենը, ԱՄՆ Պետքարտուղարության ավագ խորհրդական Ջոն Ասքոնասը եւ ամերիկյան AECOM ինժեներական ընկերության ներկայացուցիչները:

ԱՌԱՆՑ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ

ԴԱՏԱՎՈՐԻ ՈՐԴԻՆ, ԱԼԿՈՀՈԼԸ ԵՎ ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Ինչպես հայտնի է, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Լուսինե Հովհաննիսյանի որդուն՝ Էռնեստ Բատիկյանին, նախաքննական մարմինը ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք էր ներկայացրել այն բանի համար, որ, չունենալով տրանսպորտային միջոց վարելու իրավունք եւ միաժամանակ գտնվելով ոչ սթափ վիճակում, 2024 թվականի հոկտեմբերի 6-ին՝ ժամը 03:05-ի սահմաններում, Երեւան քաղաքի Գրիգոր Լուսավորիչ փողոցում վարել է «Մազդա» մակնիշի՝ 37 ZL 395 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի վերաբերյալ ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության պարեկ Հայկ Նասլյանի կողմից նույն օրը՝ ժամը 03:25-ին, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

Մեղադրյալ Էռնեստ Կարենի Բատիկյանը ներկայացված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել եւ հիմնական դատալսումների ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքի օրը պարեկային ծառայության աշխատակիցները մտել են իրենց շենքի բակ, իսկ մինչ այդ իրենք չեն հասկացել, որ ավտոմեքենան կանգնեցնում են:

Պարեկներն իրենց մոտեցել են շենքի բակում, երբ ինքը եւ Լեոնարդ Պողոսյանը մեքենայից դուրս են եղել: Նրանց բացատրել է, որ ինքը ղեկին չի գտնվել, սակայն պարեկները պնդել են, որ պետք է արձանագրեն:

Ինքը հենց սկզբից ասել է, որ ալկոհոլ օգտագործած է, այդ պատճառով մեքենան չի վարել, այլ վարել է Լեոնարդը: Պարեկները չափել են իր խմածությունը, կազմել են արձանագրություն, որտեղ ինքը նշում է կատարել, որ մեքենան ինքը չի վարել:

Լեոնարդ Պողոսյանը նույնպես բազմիցս փորձել է բացատրել, որ ինքն է եղել ղեկին, բայց պարեկներն ընդհանրապես իրենց չեն լսել:

Այն պահին, երբ պարեկները մոտեցել են, մեքենան կանգնած վիճակում է գտնվել, իսկ ինքն ու Լեոնարդը դրսում խոսում էին: Նրանք մոտեցել են եւ ասել, որ ղեկին եղել է ինքը, պնդել են, որ տեսել են իրեն, սակայն ֆիզիկապես անհնար էր, որ տեսած լինեին:

Պարեկային ծառայության աշխատակիցներն ասել են, որ դեռեւս կրկեսի մոտից տեսել են, որ ինքն է վարել մեքենան, իսկ իրենց բակը, որտեղ մոտեցել են, գտնվում է քաղաքապետարանի դիմաց:

Պնդում է, որ մեքենան ինքը չի վարել, այլ վարել է Լեոնարդը:

Ավելին, դատարանին այդպես էլ չեն ներկայացվել պարեկներ Նարեկ Սաֆարյանի եւ Հայկ Նասլյանի ծառայողական համազգեստին ամրացված կամ նրանց ծառայողական ավտոմեքենայի վրա տեղադրված տեսանկարահանող սարքերի արձանագրած տեսագրությունները, որոնք կարող էին առանցքային նշանակություն ունենալ հարցաքննված անձանց ցուցմունքների արժանահավատությունը գնահատելու եւ վարույթի լուծման տեսանկյունից կարեւոր նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու տեսանկյունից:

Արդյունքում դատարանը վճռել է ճանաչել եւ հռչակել Էռնեստ Բատիկյանի անմեղությունը:

Որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան, որը եւս անփոփոխ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՐԶՎԵԼ ԵՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Արթուր Մնոյանի կողմից Ապարանի քննչական բաժնում ստեղծված քննչական խմբում պարզվել է սեպտեմբերի 2-ին Արագածոտնի մարզում տեղի ունեցած խոշոր ու ողբերգական ավտովթարի հետեւանքով մահացածների եւ վիրավորների ինքնությունը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, մահացածներին են՝ Ս. Կարապետյանը, Ս. Թմոյանը, Թ. Թմոյանը, Մ. Մանուկյանը եւ Ի. Պապյանը:

Վիրավորներին են՝ Ս. Երիցյանը, Վ. Գեւորգյանը, Ն. Գեւորգյանը, Մ. Գրիգորյանը, Ք. Գրիգորյանը, Մ. Նիկողոսյանը, Մ. Բեգոյանը, Գ. Ավագյանը, Ա. Գեւորգյանը, Ա. Ղարիբյանը եւ Լ. Գեւորգյանը:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ըստ նախնական տեղեկությունների վթարի մեղավորը եղել է «Opel Zafira»-ն, որը դուրս է եկել հանդիպակաց երթեւեկելի գոտի եւ ճակատային բախում ունեցել Երեւան-Արթիկ երթուղին սպասարկող «ՊԱՋ» ավտոբուսին:

Քննիչի որոշմամբ նշանակվել են դիակի դատաբժշկական եւ ավտոտեխնիկական փորձաքննություններ:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր SHAMSHYAN.com-ը, սեպտեմբերի 2-ին խոշոր ու ողբերգական ավտովթար էր տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 17:15-ի սահմաններում Քուչակ-Ապարան ավտոճանապարհին բախվել էին մարդատար «ՊԱՋ» ավտոբուսն ու «Opel Zafira» մակնիշի ավտոմեքենան:

Վթարի հետեւանքով 5 հոգի մահացել էին, 11 հոգի տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել էին Ապարանի եւ տարբեր բժշկական կենտրոններ:

Վիրավորներին առաջինը օգնության էին հասել քաղաքացիները եւ ըստ քաղաքացիների հայտնածի՝ օպերատիվորեն ժամանած շտապօգնության բժիշկների հերթապահ խմբերը:

Դեպքի վայր էր ժամանել ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Պարեկային ծառայության պետ, ՆԳ նախարարի տեղակալ, ոստիկանության գնդապետ Գեւորգ Զաքարյանը:

Օպերատիվորեն ժամանել էին ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության եւ Ապարանի հրշեջ-փրկարարական ջոկատի փրկարարները՝ մարզային փրկարարական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Շամիրյանի, Ապարանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար Էդգար Ավդալյանի գլխավորությամբ:

Մահացածներից մի քանիսին ավտոմեքենայից դուրս էին բերել փրկարարները՝ օգտագործելով հատուկ տեխնիկա:

Ժամանել էին նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ապարանի բաժնի հերթապահ խումբը՝ բաժնի պետ Մանվել Թամրազյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել էին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Արագածոտնի մարզի գումարտակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Արտյոմ Սահակյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Մանուկ Սարգսյանի գլխավորությամբ:

Դեպքի մասին ՊԾ Արագածոտնի մարզի գումարտակից տեղեկությունը փոխանցել էին ՀՀ Քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության Ապարանի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ վարչության պետ Արթուր Մնոյանի, Ապարանի քննչական բաժնի պետի եւ հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչի գլխավորությամբ:

Վթարի փաստով Ապարանի քննչական բաժնում նախաձեռնվել էր քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են վարորդների, մահացածների եւ վիրավորների ինքնությունը:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ մարդատար «ՊԱՋ» ավտոբուսը սպասարկում էր Արթիկ-Երեւան երթուղին:

ՎՐԱԵՐԹ

ԻՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանն այցելել է Ճամբարակում վթարի ենթարկված զինվորներին:

Հայտնի դարձավ, թե Ճամբարակում վրաերթի ենթարկված զինվորներն ինչ վիճակում են գտնվում:

Չորս զինվոր նախապատրաստվում է դուրսգրման, մյուս երկուսի կյանքին վտանգ չի սպառնում, նրանք գտնվում են հոսպիտալի բժիշկների հսկողության տակ:

Հիշեցնենք, որ նախորդ օրը հայտնել էինք, որ կալանավորվել է Ճամբարակի զորամասի գումարտակի շտաբի պետը:

Օգոստոսի 26-ին հայտնել էինք, որ Ճամբարակ քաղաքից դեպի Վահան գյուղ տանող ճանապարհին 7 զինվորի վրաերթի ենթարկելու դեպքով ձերբակալվել է ՊՆ N զորամասի գումարտակի շտաբի պետը:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը պարզել է, թե ինչու են զինվորները երեկոյան ուշ ժամին վազել Ճամբարակից դեպի Վահան գյուղ տանող ճանապարհով:

Բանն այն է, որ զինվորները զորամասի ճաշարանում բարձր զրուցել են, ու շտաբի պետը նրանց պատժելու նպատակով որոշել է Ճամբարակ քաղաքից դեպի Վահան գյուղ տանող ճանապարհին վազեցնել:

Եւ ահա, իրավապահները պարզել են, որ գումարտակի շտաբի պետի կողմից նշանակված պատիժը կամ տույժը օրենքով սահմանված բանակային կանոնակարգում չկա:

Դեռ ավելին՝ շտաբի պետը զինվորներին նման պատժի արժանացնելով՝ չի ապահովել վերջիններիս անվտանգությունը, ինչն էլ 7 զինվորի համար դժբախտ պատահարի հետեւանք է դարձել, ու, ցավոք, մեկ զինվորի կյանք փրկել չի հաջողվել:

Նա Աբովյանի բնակիչ, 2007 թվականին ծնված Ս. Վարդանյանն էր:

Վիրավորներն էին 2007 թվականին ծնված Ժ. Հ.-ն, 2007 թվականին ծնված Ա. Ս.-ն, որը Երեւանի բնակիչ է, 2007 թվականին ծնված Ս. Ա.-ն՝ Սյունիքի մարզի բնակիչ, 2007 թվականին ծնված Ս. Ե.-ն՝ Կոտայքի մարզի բնակիչ, 2008 թվականին ծնված Գ. Մ.-ն եւ 2008 թվականին ծնված Գ. Բ.-ն:

Դեպքից անմիջապես հետո ձերբակալվել եւ այժմ կալանքի տակ է մեքենայի վարորդ Վահան Ճաղարյանը:

Իրավապահները պարզել էին, որ «ԳԱԶ-53» մեքենան պիտանի չի եղել շահագործման, իսկ վարորդը անգամ վարորդական վկայական չի ունեցել:

Եւ ահա, գումարտակի շտաբի պետը կալանավորված է, զինվորների վրաերթի ենթարկած վարորդը եւս կալանքի տակ է, սակայն մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ՊՆ-ում ծառայողական քննություն է նշանակված, ինչպես նաեւ Քննչական կոմիտեում քրեական վարույթ կա, որով քննվում է զորամասի հրամանատարի պատասխանատվության հարցը:

Ք. Մ.

● *Օգոստոսի 24-ից 31-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են չամրակապված վարելու 675 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

Օգոստոսի 24-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ կատարել. «Օգոստոսի 24-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող բուժհիմնարկների շենքերից քանի՞սը կարիք ունի վերանորոգման, քանի՞սը՝ հիմնանորոգման եւ քանի՞սը՝ նորի կառուցման»: Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության բուժհիմնարկներից վերանորոգման կամ հիմնանորոգման կարիք ունի 1 ամբուլատորիա եւ ամբուլատորիաների կազմում գործող 5 բուժամանկաբարձական կետ: Պլանավորված է Ջորականում կառուցել բժշկական ամբուլատորիա: Կառուցվել է Սեւքարի ամբուլատորիայի Սարիգյուղի բուժամանկաբարձական կետը (գործում է), շուտով շահագործման կհանձնվի Գետահովիտի ԱԱՊԿ-ի շենքը, կառուցման փուլում են Այրումի եւ Կողբի բժշկական ամբուլատորիաների շենքերը»: Նիկոլ Փաշինյանի իշխանությունը այս տարվա առաջին կիսամյակի արդյունքներով 5 միլիարդ դրամ պարգեւավճարներ է հատկացրել ոչ արդյունավետ աշխատող, աշխատանքային նվաճումներ, դրական արդյունքներ չունեցող պետական պաշտոնյաներին, Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատողները, բացի համեմատարաբար բարձր աշխատավարձերը, տարեկան շուրջ 65 միլիոն դրամ պարգեւավճարներ են ստանում, իսկ Տավուշի մարզի պետական առողջապահական շատ հիմնարկությունների շենքեր տարիներ շարունակ անմխիթար վիճակում են, չեն նորոգվում, դրանց վերանորոգման համար պետբյուջեից գումարներ չեն հատկացվում:

ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՀՈԳԱՑԵԼ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է. «Դիլիջանը շարունակում է ամրապնդել իր դիրքը՝ որպես Հայաստանի զբոսաշրջության ամենաարագ զարգացող ուղղություններից մեկը: Meet Dilijan-ի գնահատականների համաձայն՝ 2025 թվականին քաղաք է այցելել շուրջ 243 800 մարդ՝ 5,7%-ով ավելի, քան նախորդ տարի: 2024 թվականին Դիլիջանն ընդունել էր 230 658 այցելու»: Դիլիջան քաղաքում հասարակական զուգարաններ չկան, ինչից տուժում են այդ քաղաքի բնակիչները եւ հյուրերը: 2025թ.-ին Դիլիջան այցելած ավելի քան 243 հազար զբոսաշրջիկները որտե՞ղ են հոգացել իրենց բնական կարիքները: Դիլիջանի համայնքապետարանը մեծ թափով հողամասեր է օտարում, դրանց վաճառքի գումարներով լցնում համայնքի բյուջեն: Դիլիջան համայնքի բյուջեն բավարար միջոցներ ունի տուրիստական քաղաքում մի քանի հասարակական զուգարաններ կառուցելու համար, սակայն համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանն այդ գործը չի կատարում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԵՊՀ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՑ՝ ԿԳՄՍ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Աննա Բաբաջանյանը նշանակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալի պաշտոնում:

Աննա Բաբաջանյանը ծնվել է 1993 թվականի սեպտեմբերի 15-ին՝ Երեւանում: Սովորել է Երեւանի Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 դպրոցում:

Բարձրագույն կրթությունը ստացել է Հայաստանում եւ Միացյալ Թագավորությունում: 2010-2014 թվականներին սովորել է Երեւանի պետական համալսարանում՝ ստանալով բակալավրի աստիճան «Լեզվաբանություն եւ միջմշակութային հաղորդակցություն» մասնագիտությամբ: 2014-2016 թվականներին ուսումը շարունակել է Հայաստանի ամերիկյան համալսարանում՝ ստանալով մագիստրոսի աստիճան անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մասնագիտությամբ:

2017-2018 թվականներին Բաբաջանյանը սովորել է Քեմբրիջի համալսարանում՝ ստանալով կրթության մագիստրոսի (MPhil) աստիճան՝ «Գլոբալիզացիա եւ միջազգային զարգացում» մասնագիտացմամբ:

Նրա մասնագիտական փորձը հիմնականում կապված է կրթության կառավարման, ռազմավարական պլանավորման, կրթական քաղաքականության մշակման, հետազոտությունների եւ դասավանդման ոլորտների հետ:

2015-2017 թվականներին աշխատել է Երեւանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանում՝ որպես անգլերենի ուսուցիչ: 2016-2017 թվականներին միաժամանակ դասավանդել է Հայաստանի ամերիկյան համալսարանի «Բաց կրթություն» Դիլիջանի մասնաճյուղում:

2018-2019 թվականներին ներգրավված է եղել հետազոտությունների միջազգայնացման խթանմանն ուղղված C3QA Erasmus+ ծրագրի աշխատանքային խմբում, ինչպես նաեւ աշխատել է որպես ԿԳՄՍ նախարարի տեղակալի օգնական:

2019-2020 թվականներին եղել է Երեւանի Գարեգին Նժդեհի անվան թիվ 161 հիմնական դպրոցի կառավարման խորհրդի անդամ:

2019-2022 թվականներին որպես համակարգող փորձագետ ներգրավված է եղել Հանրակրթության պետական նոր չափորոշչի մշակման աշխատանքային խմբում՝ Համաշխարհային բանկի EU4Innovation ծրագրի շրջանակում:

2020 թվականին աշխատել է Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամում (FAST)՝ որպես ռազմավարական վերլուծաբան:

2021-2022 թվականներին Հայաստանի ամերիկյան համալսարանի «Բաց կրթություն» բաժնում համակարգել է HSBC Հայաստանի «Quality Professionals for Quality Jobs» ծրագիրը:

2022 թվականին ՄԱԿ-ի Հայաստանում համակարգողի գրասենյակի շրջանակում որպես ազգային խորհրդատու ներգրավված է եղել «Կրթության վերափոխման գլոբալ գագաթնաժողովի» աշխատանքներում:

2022-2026 թվականներին Բաբաջանյանը ղեկավարել է Երեւանի պետական համալսարանի Ռազմավարական պլանավորման կենտրոնը: 2023-2026 թվականներին միաժամանակ եղել է «KPI4HE» Erasmus+ ծրագրի աշխատանքային խմբի անդամ:

Բացի մասնագիտական գործունեությունից՝ նա մասնակցել է մի շարք միջազգային վերապատրաստումների եւ հետազոտական ծրագրերի:

Աննա Բաբաջանյանը տիրապետում է անգլերեն եւ ռուսերեն լեզուներին: Ամուսնացած է:

2026 թվականի սեպտեմբերի 2-ից Աննա Բաբաջանյանը ստանձնել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալի պաշտոնը՝ համակարգելով հանրակրթության եւ մասնագիտական կրթության ու ուսուցման ոլորտները:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է

Արարատի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրել է Արարատի քաղաքային զբոսայգու տարածքում գտնվող հողամասերը տարբեր անձանց տրամադրելու վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրության արդյունքում, ի թիվս այլնի, պարզվել է, որ Արարատ համայնքի նախկին ղեկավար Ա.Բ.-ն, խախտելով իրավահարաբերության ծագման պահին գործող Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, Արարատ քաղաքի Այգի 7 հասցեում գտնվող՝ 0.0640 հա մակերեսով հողամասը 2008 թվականի մարտի 10-ին կառուցապատման իրավունքով՝ 99 տարի ժամկետով, հատկացրել է տվյալ ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Հ.Պ.-ի մորը, ով իր հերթին հետագայում նշված իրավունքը նվիրել է որդուն՝ Հ.Պ.-ին:

Դատախազի կողմից միջնորդագիր է հասցեագրվել Արարատ համայնքի ղեկավարին՝ Արարատ համայնքի եւ կառուցապատողի միջեւ 2008 թվականի մարտի 10-ին կնքված կառուցապատման իրավունքը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Միջնորդագրի հիման վրա, Արարատի համայնքապետարանի իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, 2026 թվականի սեպտեմբերի 2-ին Կադաստրի կոմիտեում դադարեցվել է Արարատ քաղաքի Այգի 7 հասցեում գտնվող՝ 0.0640 հա մակերեսով, 1 միլիոն 201 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը:

Առ այսօր Արարատ համայնքի տիրապետմանն են վերադարձվել Արարատի քաղաքային զբոսայգու տարածքում գտնվող հետեւյալ 5 հողատարածքները՝

Արարատ քաղաքի Այգի 7 հասցեում գտնվող՝ 0.0640 հա մակերեսով հողամասը

Արարատ քաղաքի Այգի 1/1 հասցեում գտնվող՝ 0.0591 հա մակերեսով հողամասը,

Արարատ քաղաքի Այգի 6 հասցեում գտնվող՝ 0.2100 հա մակերեսով հողամասը,

Արարատ քաղաքի Այգի 10 հասցեում գտնվող՝ 0.0630 հա մակերեսով հողամասը,

Արարատ քաղաքի Շահումյան 36/5 հասցեում գտնվող՝ 0.1280 հա մակերեսով հողամասը:

Մյուս պայմանագրերի լուծման ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

● *Մարզերում օգոստոսի 24-ից 31-ը պարեկները հայտնաբերել են չամրակապված վարելու 3410 դեպք:*

ԼՈՒՐ

ԻՆՉԻ՞Ց ԷԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼ

Հուլիսի 14-ին Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը կազմակերպված ընդունելության ընթացքում բակում մատուցված հյուրասիրությունից հետո միջոցառման 12 մասնակիցներ հիվանդանոցներ էին դիմել «սուր աղիքային վարակ» ախտորոշմամբ:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինն անմիջապես ձեռնարկել էր գործողություններ՝ պարզելու համար, թե որ փուլում են առաջացել խնդիրները:

Այսպես. վերահսկողություն է իրականացվել «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում՝ «Արմենիա Հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերության խոհանոցում: Ստուգման ընթացքում նմուշառում է կատարվել «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի 24.07.2026 թվականի արտադրության գործարանային փաթեթվածքով հավի ֆիլեից, սպանդանոցային ծագման տեղական արտադրության խոզի մսից, «Ֆուդ Ռեփաբլիք» ՍՊԸ-ի 25.06.26 թվականի արտադրության սաղմոնի ֆիլե ծխեցված եւ 08.07.2026 թվականի արտադրության գործարանային փաթեթվածքով իշխանի ֆիլե ապխտած արտադրատեսակներից եւ ներկայացվել լաբորատոր փորձաքննության: Արդյունքում՝ իշխանի ֆիլեն «ՄԱՖԱՆՄՔ» (մեզոֆիլ աէրոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ մանրէներ) եւ ԱՑԽՄ (աղիքային ցուպիկի խմբի մանրէներ), իսկ հավի ֆիլեն՝ «ախտածին սալմոնելաներ», ցուցանիշներով չեն համապատասխանել օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Տրվել են տվյալ խմբաքանակների իրացումն արգելելու, շուկայից հետ կանչելու, ոչնչացնելու կամ օգտահանելու մասին կարգադրագրեր:

Բացի այդ, խոհանոցում հայտնաբերվել է պիտանիության ժամկետն անցած սննդամթերք, մասնավորապես՝ «Պանո» տոստի հաց (արտադրված՝ 24.06.2026թ, պիտանիության ժամկետը՝4 օր), «Պանո» լոշիկ (արտադրված՝ 14.04.2026թ, պիտանիության ժամկետը՝ 7 օր), հաճարի ալյուր (արտադրված՝ 07.11.2025թ, պիտանիության ժամկետը՝1 տարի) եւ պարմայի հաց՝առանց պիտանիության ժամկետի:

Հայտնաբերված վտանգավոր սննդամթերքը տեղում ոչնչացվել է:

Հիմնվելով լաբորատոր փորձաքննության արդյունքների վրա, ինչպես նաեւ հետագծելիությունն ապահովելու նպատակով՝ վերահսկողական միջոցառումներ են իրականացվել նաեւ «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ում եւ «Ֆուդ Ռեփաբլիք» ՍՊԸ-ում, կատարվել են նմուշառումներ վերը նշված արտադրատեսակներից եւ ներկայացվել լաբորատոր փորձաքննության. անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

«ՊԱՐԶԵՑՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ»

ԱՌԱՎԵԼ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գործադիրը հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքներով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման կազմակերպման մասին («Պարզեցված մաքսային միջանցք»)» արձանագրության նախագծի ստորագրման առաջարկությանը:

Մասնավորապես նախատեսվում է, որ «Պարզեցված մաքսային միջանցքի» կիրառման նպատակով կողմերը, մինչ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների՝ մյուս կողմի պետության տարածք մուտք գործելը, էլեկտրոնային եղանակով տեղեկություններ են փոխանակելու ապրանքների, տրանսպորտային միջոցների եւ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների, այդ թվում՝ բեռնափոխադրողների եւ նրանց աշխատակիցների վերաբերյալ՝ արձանագրությամբ սահմանվող պայմաններին համապատասխան: «Պարզեցված մաքսային միջանցքը» նախատեսվում է կիրառել այն սուբյեկտների նկատմամբ, որոնց գործունեությունը բնորոշվում է մաքսային օրենսդրության խախտման ցածր ռիսկայնությամբ: Պարզեցումները կիրառվելու են բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, եւ բոլոր տեսակի ապրանքների համար՝ հայաստանյան եւ իրանական այն սուբյեկտների նկատմամբ, որոնք կօգտվեն «Պարզեցված մաքսային միջանցքից» կամավորության սկզբունքով:

«Պարզեցված մաքսային միջանցքի» ներդրման հիմնական նպատակը արտաքին տնտեսական գործունեության օրինապահ մասնակիցների համար առավել բարենպաստ պայմանների ստեղծումն է, մասնավորապես՝ կողմերի պետությունների մաքսային մարմիններում ապրանքների մաքսային հսկողության եւ ձեւակերպումների հետ կապված ընթացակարգերի արագացումը, պահանջվող փաստաթղթերի կրճատումը, ապրանքների վերաբերյալ ստացված տեղեկությունների վերլուծության հիման վրա ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության ձեւերի եւ իրականացման ծավալների նվազեցումը, որոնք կհանգեցնեն սահմանին ապրանքների բացթողնման եւ սպասելաժամանակի էական կրճատմանը: «Պարզեցված մաքսային միջանցքի» ներդրման եւ գործարկման համատեքստում էական նշանակություն ունի նաեւ Մեղրիի սահմանային անցման կետի՝ներկայումս իրականացվող արդիականացման գործընթացը՝ անհրաժեշտ շենքային պայմանների, ենթակառուցվածքային հնարավորությունների եւ տեխնիկական հագեցվածության ապահովման տեսանկյունից, ուստի «Պարզեցված մաքսային միջանցքի» լիարժեք ներդրումը հնարավոր կլինի ընթացող շինարարության ավարտից հետո:

Հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության եւ ՕՊԵԿ-ի Միջազգային զարգացման հիմնադրամի միջեւ «Հայաստանի տնտեսական վերափոխման ծրագիր» վարկային համաձայնագիրը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրի նախագծին: 80 մլն եվրո արժողությամբ համաձայնագիրը նպատակաուղղված է ՀՀ-ում մրցակցային միջավայրի բարելավմանը եւ ներդրումների ներգրավմանը: Բյուջետային աջակցության միջոցների ստացման համար նախապայման է հանդիսանում երկկողմ փոխհամաձայնեցված քաղաքականության գործողությունների աղյուսակով սահմանված՝ մի շարք ոլորտներում միջոցառումների եւ բարեփոխումների իրականացումը:

ՀԱՓՇՏԱԿՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 1 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ

Դատախազը 2026 թվականի սեպտեմբերի 1-ին Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է հանձնել 59 քաղաքացիներից 1 միլիարդ 73 միլիոն 486 հազար դրամ հափշտակած, եւս 19 քաղաքացիներից 38 միլիոն 879 հազար դրամի հափշտակության փորձ կատարած անձանց վերաբերյալ քրեական վարույթի նյութերը:

Քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթով պարզվել է, որ օտարերկրյա քաղաքացիներ Մ.Ծ.-ն, Մ.Մ.-ն, Ա.Պ.-ն, ոմն «Մաքս»-ը եւ քննությամբ չպարզված այլ անձինք 2025 թվականի սեպտեմբերի 26-ից մինչեւ 2026 թվականի ապրիլի 21-ն ընկած ժամանակահատվածում ստեղծել եւ մասնակցել են հանցավոր կազմակերպության գործունեությանը:

Հանցավոր կազմակերպության անդամները, փոխլրացնելով միմյանց գործողությունները, մշակել են առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելու միասնական մեխանիզմ: Մասնավորապես՝ «WhatsApp» եւ «Viber» հավելվածներում, օգտագործելով հանցավոր կազմակերպությանը օժանդակած Հ.Բ.-ի, Ռ.Ս.-ի եւ իրենց անվամբ գրանցված բջջային հեռախոսահամարները, հանրության շրջանակում հայտնի անձանց անուններով եւ լուսանկարներով ստեղծել են կեղծ օգտահաշիվներ:

Այդ օգտահաշիվներից տվյալ անձանց ծանոթներին ուղարկվել են հաղորդագրություններ այն մասին, որ իրենց ծանոթը խնդիրներ ունի պետական տարբեր մարմինների հետ, եւ այդ կապակցությամբ իրենց հետ կապ կհաստատի ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցը:

Այնուհետեւ, ներկայանալով որպես ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ՝ տարբեր անուններով, այդ թվում՝ «Դավիթ Աշոտի Օգանեսյան», «կապիտան Վազգեն Հարությունյան», «Գուրգեն Լեւոնի Սիմոնյան», «Վահան Սեյրանի Պողոսյան» եւ «Արման Տիգրանի Սարգսյան», զանգահարել են քաղաքացիներին, հոգեբանական ազդեցություն գործադրել նրանց նկատմամբ, ֆինանսական միջոցների վերաբերյալ ենթադրյալ խնդիրների մասին ձեւավորել վախի եւ տագնապի մթնոլորտ, պահանջել պահպանել գաղտնիություն եւ հետեւել իբրեւ ՀՀ կենտրոնական բանկի աշխատակցի ցուցումներին:

Այնուհետեւ, ներկայանալով որպես ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության աշխատակից՝ «Դավիթ Նիկոյան» տվյալով, առավել ամրապնդել են տուժածների վստահությունը:

Շարունակելով հանցավոր գործողությունները՝ հանցավոր կազմակերպության անդամները ներկայացել են նաեւ որպես ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցներ՝ տարբեր անուններով, ներկայացրել կեղծ վկայագրեր եւ քաղաքացիներին համոզել, որ հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է իրենց բանկային հաշիվներում առկա ֆինանսական միջոցները փոխանցել այլ՝ իբրեւ «անվտանգ» հաշիվների:

Հանցավոր կազմակերպության անդամները, գործելով մեկ միասնական դիտավորությամբ, ընդհանուր առմամբ 59 քաղաքացիներից հափշտակել են 1 միլիարդ 73 միլիոն 486 հազար դրամ, իսկ 19 քաղաքացիներից փորձել են հափշտակել 38 միլիոն 879 հազար դրամ:

Մ.Մ.-ի նկատմամբ հայտարարված է հետախուզում:

Քրեական վարույթից առանձնացված մասը՝Մ.Ծ.-ի. Ա.Պ.-ի, Հ.Բ.-ի եւ Ռ.Ս.-ի վերաբերյալ, հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՇՆԱՆ ՀԱՄԱՐ՝ ՆՐԲԱԳԵՂ ՏԱՐԲԵՐԱԿ

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՍՈՎՈՐԱԿԱՆ ՇԱՊԻԿՆԵՐԻՑ

Քենդալ Ջենները աշնան համար ընտրում է նրբագեղ տարբերակ:



Քենդալ Ջենների ոճով աշնանային կերպար

Գրեթե նույնական վերնաշապիկ՝ օրգանական բամբակից միկրոռիբ գործվածքով, 3/4 թեւերով - $20

Ամառից աշուն անցնող ջինս՝ Bella Stretch Straight - $50

Նմանատիպ մինիմալիստական կոշիկներ՝ իտալական կաշվից, բարակ գոտիով - $80

Քենդալ Ջենները կարծես կատարելության է հասցրել այսպես կոչված model-off-duty՝ «աշխատանքից դուրս մոդելի» ոճը:

Անկախ նրանից՝ նա օդանավակայան է գնում, թե դուրս է գալիս ժամադրության, Ջենների կերպարները սովորաբար կառուցված են դասական ու պարզ իրերի շուրջ՝ ջինս եւ հիմնական վերնաշապիկ: Այս ամառ մենք ոգեշնչվել էինք նրա՝ սովորական շապիկները տարբեր կերպ համադրելուց, սակայն վերջին կերպարները հուշում են, որ աշնանը նրա նախընտրած տարբերակը կարող է լինել երեք քառորդ թեւով, ավելի նրբագեղ եւ կիպ նստող վերնաշապիկը:

Այս մոդելը հիանալի է անցումային եղանակի համար. այն բավական թեթեւ է տաք օրերին կրելու համար, բայց միաժամանակ ավելի հավաքված տեսք ունի: Իսկ մարմնին մոտ սիլուետը թույլ է տալիս այն հեշտությամբ համադրել թե՛ առօրյա, թե՛ ավելի կոկիկ կերպարների հետ:

Ջենները այս վերնաշապիկը մուգ կապույտ ջինսի հետ կրել է երկու անգամ: Առաջին կերպարում նա այն համադրել էր նրբագեղ բալետկաների, իսկ երկրորդում՝ նույնքան դասական սեւ մատնաթափերի հետ: Երկու կերպարներն էլ ապացուցում են, որ այս համադրությունը կարող է դառնալ զգեստապահարանի հուսալի «համազգեստը»՝ հարմար ինչպես առօրյա, այնպես էլ ավելի էլեգանտ առիթների համար:

Quince-ի երեք քառորդ թեւով վերնաշապիկը պատրաստված է բամբակի եւ էլաստանի խառնուրդից, ինչի շնորհիվ այն շնչող է եւ միաժամանակ ունի փոքր-ինչ ձգվող հատկություն: Բարակ ռիբավոր գործվածքը վերնաշապիկին հետաքրքիր հյուսվածք է հաղորդում, իսկ լայն boat-neck՝ նավակաձեւ բացվածքը, կերպարին ավելի կանացի շեշտադրում է տալիս:

Քենդալ Ջենների ընտրած սեւ գույնին գրեթե նույնական տարբերակից բացի, վերնաշապիկը հասանելի է նաեւ մոխրագույն, սպիտակ եւ վարսակի գույնի տարբերակներով:

Այս մոդելն արդեն հասցրել է դառնալ գնորդների սիրելին. այն ունի ավելի քան 19,000 կարծիք: Գնորդներից մեկը այն նկարագրել է որպես «փափուկ, շնչող եւ շատ բարձրորակ»: Մեկ այլ հաճախորդ նշել է, որ այն սովորական T-shirt-ներից «ավելի հարմարավետ» է եւ «ավելի հավաքված տեսք է հաղորդում»: Երրորդ գնորդն ընդգծել է դրա բազմաֆունկցիոնալությունը՝ անվանելով այն «հիանալի շերտավորման տարբերակ աշնան համար»:

Կերպարն ամբողջացնելու համար կարելի է ընտրել նույնքան մուգ երանգի ուղիղ կտրվածքով ջինս, որը սեւ վերնաշապիկի եւ համապատասխան աքսեսուարների հետ միասին ստեղծում է մաքուր ու ձգված սիլուետ:

Իսկ եթե Ջենների սեւ մատնաթափերը ավելի շատ ամառային տրամադրություն են հաղորդում, աշնան համար կարելի է ընտրել սեւ բալետկաներ կամ փակ, հարթ կոշիկներ: Երեք քառորդ թեւով այս վերնաշապիկի փոխարեն նմանատիպ տրամադրություն կարելի է ստանալ նաեւ կարճաթեւ, scoop-neck բացվածքով T-shirt-ի կամ դասական, մարմնին կիպ նստող երկարաթեւ վերնաշապիկի միջոցով:

Պարզ, հարմարավետ եւ միաժամանակ նրբագեղ՝ Քենդալ Ջենների այս համադրությունը հենց այն աշնանային բանաձեւն է, որը հեշտությամբ կարելի է ներառել ամենօրյա զգեստապահարանում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ԻՍՊԱՆԻԱ

Հայաստանի հավաքականի 25-ամյա կիսապաշտպան Էդգար Սեւիկյանը վարձակալությամբ տեղափոխվել է իսպանական երկրորդ դիվիզիոնը (La Liga 2) ներկայացնող «Սեուտա»: Նրա տրանսֆերային իրավունքը պատկանում է հունգարական «Ֆերենցվարոշին»,գրում է sport.news.am-ը:

««Սեուտա» ՖԱ-ն համաձայնության է եկել «Ֆերենցվարոշի» հետ ֆուտբոլիստ Էդգար Սեւիկյանի տրանսֆերի վերաբերյալ, ով մինչեւ մրցաշրջանի ավարտը վարձավճարով կխաղա «Սեուտայում»:

Էդգար Սեւիկյանը (Մոսկվա, Ռուսաստան, օգոստոսի 8, 2001թ.) ֆուտբոլիստ է, ով ունի հստակ հարձակողական ոճ, կարող է խաղալ ինչպես աջ եզրային, այնպես էլ հարձակողական կիսապաշտպանի դիրքերում: Նա աչքի է ընկնում իր գերազանց հարվածներով, հատկապես միջին եւ հեռու տարածություններից, ինչպես նաեւ իր ուշագրավ տեսլականով եւ գոլային փոխանցումներ կատարելու ունակությամբ:

«Սեուտա» ակումբի նոր խաղացողը փորձ ունի ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մրցաշարերում: Նա ներկայացրել է Ռուսաստանը երիտասարդական հավաքականներում, իսկ ավելի ուշ խաղացել է Հայաստանի ազգային հավաքականում: Նա նաեւ փորձ ունի եվրոպական մրցաշարերում՝ արժեքավոր փորձ բերելով «Սեուտա» ակումբի մարզական նախագծին:

«Լեւանտեի» երիտասարդական թիմի միջով անցնելով՝ Սեւիկյանը շարունակել է իր կարիերան Իսպանիայից դուրս, նախքան հունգարական ֆուտբոլին միանալը, որտեղ էլ անցկացրել է իր կարիերայի մի մասը:

Այսպիսով, «Սեուտան» ձեռք է բերում տաղանդավոր, տեխնիկական որակներ ունեցող եւ գրոհների վերջնամասում վտանգ ստեղծելու ունակությամբ ֆուտբոլիստի, ով «Ալֆոնսո Մուրուբե» է ժամանում իր ֆուտբոլային խաղը ցուցադրելու եւ թիմին մրցաշրջանի մնացած մասում նպատակներին հասնելու հարցում օգնելու նպատակով:

Բարի գալուստ, Էդգար»,- նշվում է «Սեուտայի» հաղորդագրությունում:

Անցած մրցաշրջանում Էդգար Սեւիկյանը վարձակալությամբ հանդես էր եկել ռուսական «Ակրոնում»:

«Սեուտան» ընթացիկ մրցաշրջանի առաջին երեք տուրերում նույնքան պարտություն է կրել գոլերի 1:10 տարբերությամբ եւ վերջին տեղում է:

ՆՇԵԼ Է ԳԼԽԱՎՈՐ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻՆ

Football Meets Data վերլուծական հարթակի մասնագետները գործարկել են սուպերհամակարգիչն ու հաշվարկել թիմերի՝ 2026/27 մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայում հաղթելու թարմացված հնարավորությունները:

Ըստ հաշվարկների՝ եվրոպական հեղինակավոր մրցաշարում հաղթելու ամենաբարձր շանսերն ունի ֆրանսիական ՊՍԺ-ն: Փարիզյան ակումբի հաղթանակի հավանականությունը գնահատվում է 13 տոկոս, ինչը նրանց հնարավորություն է տալիս երրորդ տարին անընդմեջ նվաճել չեմպիոնական տիտղոսը:

Երկրորդ տեղում Մյունխենի «Բավարիան» է՝ 10.5 տոկոս հավանականությամբ: Լավագույն եռյակը եզրափակում է կատալոնական «Բարսելոնան», որի շանսերը գնահատվում են 10.3 տոկոս: Նույնքան՝ 10.3 տոկոս հավանականություն ունի նաեւ Լոնդոնի «Արսենալը»:

Լավագույն տասնյակում ընդգրկված մյուս ակումբների հաղթանակի շանսերը բաշխվել են հետեւյալ կերպ.

Մադրիդի «Ռեալ» - 9.5 տոկոս
«Մանչեսթեր Սիթի» - 8.3 տոկոս
«Լիվերպուլ» - 6.4 տոկոս
«Մանչեսթեր Յունայթեդ» - 4.4 տոկոս
Մադրիդի «Ատլետիկո» - 2.9 տոկոս
Միլանի «Ինտեր» - 2.9 տոկոս

Լավագույն տասնյակից դուրս գտնվող թիմերից համեմատաբար բարձր ցուցանիշներ ունեն «Նապոլին» (2.4 տոկոս), Դորտմունդի «Բորուսիան» (2.2 տոկոս), «Լայպցիգը» (1.8 տոկոս), «Ասթոն Վիլան» (1.8 տոկոս), «Ռոման» (1.8 տոկոս), «Վիլյառեալը» (1.7 տոկոս), «Կոմոն» (1.6 տոկոս) եւ «Բետիսը» (1.4 տոկոս):

Հիշեցնենք, որ Չեմպիոնների լիգայի 2026/27 մրցաշրջանի լիգայի փուլը մեկնարկում է սեպտեմբերի 8-ին եւ կտեւի մինչեւ 2027 թվականի հունվարի 27-ը: Առաջին տուրի հանդիպումները բաշխված են երեք օրերի վրա՝ սեպտեմբերի 8 (երեքշաբթի), սեպտեմբերի 9 (չորեքշաբթի) եւ սեպտեմբերի 10 (հինգշաբթի):

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՌԵԱԼ»–ՈՒՄ ԲԱՐԿԱՑԱԾ ԵՆ

Մադրիդի «Ռեալը» կարգապահական վարույթ է սկսել թիմի պաշտպան Ռաուլ Ասենսիոյի դեմ: Պատճառը դարձել է ֆուտբոլիստի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու վերաբերյալ դատարանի կայացրած որոշումը: Այս մասին հաղորդում է իսպանական COPE ռադիոկայանը, գրում է armsport-ը:

Միջադեպը տեղի է ունեցել 2026 թվականի օգոստոսի 16-ին Գրան Կանարիայի հարավում: Իրավապահները կանգնեցրել են Ասենսիոյին, երբ նա վարելիս է եղել իր «Պորշ» մակնիշի ավտոմեքենան: Ստուգման արդյունքում պարզվել է, որ ֆուտբոլիստի արյան մեջ ալկոհոլի պարունակությունը չորս անգամ գերազանցել է թույլատրելի նորման: Որպես պատիժ՝ դատարանը պաշտպանին ութ ամսով զրկել է վարորդական իրավունքից եւ պարտավորեցրել վճարել 14 400 եվրո տուգանք:

Մադրիդյան ակումբում կարծում են, որ խաղացողի այս արարքը զգալի վնաս է հասցրել «Ռեալի» հեղինակությանն ու իմիջին, ուստի չեն բացառում հավելյալ պատժամիջոցների կիրառումը:

Հիշեցնենք, որ 2025 թվականի ամռանը պաշտպանը երկարաձգել էր գործող պայմանագրի ժամկետը «արքայական» ակումբի հետ մինչեւ 2031 թվականը:

«ՆՎԱՍՏԱՑԻՐԻՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԵՑԻՆ»

Իսպանական «Դեպորտիվոյի» 37-ամյա հարձակվող Պյեր-Էմերիկ Օբամեյանգը հայտարարել է Գաբոնի ազգային հավաքականից հեռանալու մասին՝ նշելով, որ իրեն վիրավորված ու նվաստացած է զգում, հայտնում է armsport-ը:

Ավելի վաղ Գաբոնի կառավարությունը «հովազների» պատմության լավագույն ռմբարկուին մեղադրել էր 2026 թվականի Աֆրիկայի ազգերի գավաթի խաղարկությունում թիմի տապալման համար, ինչից հետո ժամանակավորապես ցրել էր հավաքականը:

«Ինձ նվաստացրել եւ արատավորել են, թեեւ ես Աֆրիկայի գավաթում խաղում էի վնասվածքով: Սա վերջին կաթիլն էր, եւ ես որոշեցի կանգ առնել այստեղ»,- հարձակվողի խոսքերն է մեջբերում Trtafrika-ն:

Սա առաջին դեպքը չէ, երբ Օբամեյանգը հիասթափության պատճառով հայտարարում է հավաքականում կարիերան ավարտելու մասին. 2023 թվականին նա նման որոշում էր կայացրել իր քաղաքական մեկնաբանությունների հետեւանքով առաջացած խնդիրներից հետո:

Նշենք, որ Գաբոնի հավաքականը՝ Սեբաստիեն Մինիեի գլխավորությամբ, ընդգրկվել է 2027 թվականի Աֆրիկայի ազգերի գավաթի ընտրական փուլի A խմբում, որտեղ նրա մրցակիցներն են լինելու Մարոկկոյի, Նիգերի եւ Լեսոթոյի ազգային թիմերը:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում սեպտեմբերի 13-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Եւ նորից Կարմիր Գլխարկ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որտե՞ղ կարող է դիմել զորակոչի տարիքի ՀՀ քաղաքացին, եթե գտնվում է ՀՀ տարածքից դուրս եւ չի կարող սեփական միջոցներով վերադառնալ:

Գառնիկ Նիկողոսյան,
48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան տարածքային ստորաբաժանումը, իսկ քաղաքացու՝ օտարերկրյա պետությունում բնակվելու եւ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված լինելու դեպքում դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում են տարածքային ստորաբաժանում ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով տարածքային ստորաբաժանում ներկայանալու ժամկետը:

ՀՀ ՊՆ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր եւ ե՞րբ կարող են անվճար այցելել թանգարաններ:

Գայանե Կիրակոսյան,
55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 11.04.2023 թ. N 492-Ա/2 հրամանի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարաններ մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություն է սահմանված հետեւյալ խմբերի համար՝

Հայաստան ժամանած պետական պաշտոնական պատվիրակությունների անդամների,

Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների,

Թանգարանների միջազգային խորհրդի անդամների (ԻԿՕՄ) համար,

թանգարանային աշխատողների,

երկկողմանի ծնողազուրկ 12 տարեկանից բարձր տարիքի երեխաների,

հատուկ խնամքի եւ կենցաղային սպասարկման կարիք ունեցող ծերերի,

Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցների (Հայաստանի Հանրապետության եւ նախկին ԽՍՀՄ պետությունների),

հաշմանդամություն ունեցող՝ 1-ին խմբի (ուղեկցողի հետ),

հաշմանդամություն ունեցող՝ 2-րդ եւ 3-րդ խմբերի (առանց ուղեկցողի),

աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված նպաստառուների,

բազմազավակ ընտանիքների 12 տարեկանից բարձր երեխաների,

ժամկետային զինծառայողների,

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների 12 տարեկանից բարձր դպրոցական տարիքի երեխաների (նախօրոք ներկայացված հայտերի հիման վրա),

լրագրողների՝ աշխատանքային բոլոր օրերին (անձը եւ կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում):

Նույն հրամանով սահմանված է նաեւ, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը թանգարանների մուտքն ազատ է:

ՀՀ ԿԳՄՍ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Ավտոմեքենայի եւ մոտոցիկլի բախում Կոտայքի մարզում. Երեւան-Սեւան ավտոճանապարհին մոտոցիկլը բախվել է ճանապարհի թույլատրելի հատվածում կայանված «Nissan X-Trail»-ին. մոտոցիկլավարը տեղափոխվել է հիվանդանոց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 17 + 19 + 24
Կոտայքի լեռներ	+ 7 + 10 + 19 + 23
Կոտայքի նախալեռներ	+ 13 + 15 + 24 + 27
Գեղարքունիք	+ 7 + 11 + 17 + 21
Լոռի	+ 9 + 13 + 19 + 23
Տավուշ	+ 9 + 13 + 20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 7 + 10 + 19 + 23
Արագածոտնի նախալեռներ	+ 12 + 16 + 23 + 28

Արարատ	+ 14 + 17 + 26 + 29
Արմավիր	+ 14+ 17 + 27 + 30
Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 + 16 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 18 + 27 + 30
Սյունիքի լեռներ	+ 7 + 10 + 13 + 16
Սյունիքի նախալեռներ	+ 9 + 12 + 17 + 21
Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 24 + 28
Երեւան	+ 15 + 17 + 31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **03.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*